5 [եւ յետ ի]մ մահուան՝ կէսն ինձ։ Որ զմեր յոյսս խափ[անէ Ցուդ]ալ մասնակից եւ մեր մեղ-
6 [աց տէր] է։ Ես հա(յր)...։

Մանրութիւն.— 1. 6-րդ տողում հա գրերից հետո արձանագրության շարունակությունը չի փորագրված, որ լինելու էր Սանահնի առաջնորդ Գրիգորի և միաբանության հավատիացումները Մարծպանի նվերներն ընդունելու և չկատարողների հասցեին անեծքի բառեր ասելու մասին։

2. Արձ. մեջ վերականգնված տեղերում քարերն ընկած կամ կոտրված են։

3. Նվիրատուի մոր Սթէ անձնանվան մեջ կասկածելի կարող է լինել միայն վերջին է գիրը, որ միայն կիսով չափ է տեղում պահպանվել։

4. 3-րդ տողում Փուէք տեղանվան մեջ ւ և է գրերի ծայրերը կոտրված են, որի հետևանքով վերծանությունը կասկածելի է։



Նկ. 44. Արձ. № 50։

Տարբերություն.— Ջալ մեջ է բերել այս արձանագրության միայն ընդհանուր բովանդակությունը, այն էլ ենթադրելով, որ Մարծպանը սար է տվել վանքին. այսպես՝ «Մարծպանայ որդոյ Սարգսի Համազասպեանց որ տուեալ է իւրեանց սարն յԱստուածածնիս. ի թուին ՈԿ...։

51. Նախորդի ամ կողմին

(Լուս. № 45)

Հ ՈԿ Մ 1211

Հրատարակված է՝ Ղրիմ 54

1 Ի թուի ՈԿ։ Անուամբն Այ, ես՝ Բուրայս, թոռն Ջար... [եւու յԱծ]-
2 ածինս զՄամախաթունին այգին յԱուինջք իմ աներ...
3 էց նոր կիրակէին զամէն եկեղեցիքս նա հաստատ...
4 [անխափ]ան։ Եւ Վարդ[ան վարդապետն եւ հայր Գրի]գոր ամէն միաբանաւքս...
5 ...կամ զայ[ս]... ց ... ա մեղա[ց] պարտ[ա]կան է...
6 ... յ ...։

Մանրութիւն.— 1. Արձ. աջ կողմի քարերն ընկած են, տեղում չեն նաև 4-րդ և 5-րդ տողերի քարերի մեծ մասը, որոնք թաղի ծանրության կամ խոնավության պատճառով փշրվել և թափվել են։

393—9